

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի
2018թ հոկտեմբերի 31-ին կայացած նիստի

Նախագահությամբ՝	ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր Ա.Լոքյանի
Քարտուղարությամբ՝	ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական քարտուղար Հ.Ստեփանյանի
Մասնակցությամբ՝	ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի անդամների (ներկայության թերթիկը կցվում է)

Օրակարգ՝

1. Մագիստրատուրայի հեռակա և առկա ուսուցման ավարտական կուրսերի մագիստրոսական թեզերի թեմաների բաշխման և կատարման աշխատանքների քննարկում:
Զեկուցող՝ ամբիոնների վարիչներ
2. Ուսանողական խորհրդի կողմից ներկայացված տարեկան և բյուջետային ծրագրերի քննարկում և հաստատում:
Զեկուցող՝ ուսանողական խորհրդի նախագահ Ա. Հարությունյան
3. Ընթացիկ հարց: Քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնի ասպիրանտ Մարինե Ռազմիկի Մովսիսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի փոփոխման հարցը:
Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Մ.Մարգարյան
4. Ընթացիկ հարց: Քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնի ասպիրանտ Ռաֆիկ Գուրգենի Ավետիսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը:
Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Մ.Մարգարյան
5. Ընթացիկ հարց: Կառավարման ամբիոնի ասպիրանտ Լիլիթ Գորիունի Ադամյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը:
Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Վ.Խաչատրյան
6. Ընթացիկ հարց: Կառավարման ամբիոնի ասպիրանտ Արսեն Գազիկի Զաքարյանի թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավարի փոփոխման հարցը:
Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Վ.Խաչատրյան
7. Ընթացիկ հարց: Մագիստրատուրայի հեռակա ուսուցման առաջին կուրսի (1822 թողարկում) 2018-2019 ուսումնական տարվա ուսուցման գործընթացի կազմակերպման ժամանակացույցի փոփոխման հարցը:
Զեկուցող՝ Ուսումնամեթոդական վարչության պետ Լ.Զիլֆուղարյան

1. **Լսեցին՝** Մագիստրատուրայի հեռակա և առկա ուսուցման ավարտական կուրսերի մագիստրոսական թեզերի թեմաների բաշխման և կատարման աշխատանքների քննարկման հարցը:

Զեկուցող՝ Ամբիոնների վարիչներ

Մագիստրատուրայի հեռակա և առկա ուսուցման ավարտական կուրսերի մագիստրոսական թեզերի թեմաների բաշխման և կատարման աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն ներկայացրեցին Կառավարման ամբիոնի վարիչ Վ.Խաչատրյանը, Քաղաքական կառավարման և

հանրային քաղաքականության ամբիոնի վարիչ Մ.Մարգարյանը, Իրավագիտության ամբիոնի վարիչ Ա.Եզեկյանը, Կառավարման հոգեբանության ամբիոնի վարիչ Ռ.Ադուզումցյանը (հաշվետվությունները կից ներկայացվում են):

Արտահայտվեցին՝ Ա. Լոքյանը, Վ.Խաչատրյանը, Գ.Չատինյանը, Լ.Զիլֆուղարյանը:

Որոշեցին՝ ամբիոնների կատարած աշխատանքները գնահատել լավ:

2. **Լսեցին՝** Ուսանողական խորհրդի կողմից ներկայացված տարեկան և բյուջետային ծրագրերի քննարկում և հաստատում:

Զեկուցող՝ ուսանողական խորհրդի նախագահ Ա. Հարությունյան

Զեկուցողը մանրակրկիտ ներկայացրեց ուսանողական խորհրդի տարեկան ծրագիրը և նշված ծրագրի իրագործման համար պահանջվող ֆինանսական միջոցները (կից ներկայացվում է):

Արտահայտվեցին՝ Ա. Լոքյանը, Լ.Զիլֆուղարյանը, Գ.Չատինյանը, Մ.Մարգարյանը:

Որոշեցին՝ Հաստատել ուսանողական խորհրդի կողմից ներկայացված տարեկան և բյուջետային ծրագրերը:

3. **Լսեցին՝** Ընթացիկ հարց: Քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնի ասպիրանտ Մարինե Ռազմիկի Մովսիսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի փոփոխման հարցը:

Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Մ.Մարգարյան

Զեկուցողը նշեց, որ Քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնում 17.10.2018թ. կայացած ամբիոնի նիստում քննարկվել է ամբիոնի ասպիրանտ Մարինե Ռազմիկի Մովսիսյանի դիմումը՝ թեկնածուական ատենախոսության թեման փոփոխելու վերաբերյալ և ամբիոնի նիստում կայացրած որոշմամբ միջնորդում են գիտական խորհրդին Մարինե Ռազմիկի Մովսիսյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ ««Թավշյա հեղափոխությունը» որպես Հայաստանի Հանրապետությունում քաղաքական փոփոխության գործընթաց. Սոցիալական ցանցեր» վերտառությամբ՝ ԻԳ.00.02.- «Քաղաքական գործընթացներ և ինստիտուտներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ վերահաստատել «Մասնակցային ժողովրդավարության զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման գործընթացում» վերտառությամբ՝ ԻԳ.00.02.- «Քաղաքական գործընթացներ և ինստիտուտներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ:

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Մ.Մարգարյանը:

Որոշեցին՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի Քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնի ասպիրանտ Մարինե Ռազմիկի Մովսիսյանի թեկնածուական ատենախոսության թեման վերահաստատել «Մասնակցային ժողովրդավարության զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման գործընթացում» վերտառությամբ՝ ԻԳ.00.02.- «Քաղաքական գործընթացներ և ինստիտուտներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ:

4. **Լսեցին՝** Ընթացիկ հարց: Քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնի ասպիրանտ Ռաֆիկ Գուրգենի Ավետիսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը:

Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Մ.Մարգարյան

Զեկուցողը նշեց, որ Քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնում 29.10.2018թ. կայացած ամբիոնի նիստում քննարկվել է ամբիոնի ասպիրանտ Ռաֆիկ

Գուրգենի Ավետիսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը և ամբիոնի նիստում կայացրած որոշմամբ միջնորդում են գիտական խորհրդին Ռաֆիկ Գուրգենի Ավետիսյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Քաղաքական անջատողականության զարգացման հիմնախնդիրները Եվրոպական միությունում» վերտառությամբ՝ ԻԳ.00.02.- «Քաղաքական գործընթացներ և ինստիտուտներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել քաղաքագիտության դոկտոր, պրոֆեսոր Մարիամ Մարգարյանին:

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Ս.Մարգարյանը, Ռ.Աղուզումցյանը:

Որոշեցին՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի Քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնի ասպիրանտ Ռաֆիկ Գուրգենի Ավետիսյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Քաղաքական անջատողականության զարգացման հիմնախնդիրները Եվրոպական միությունում» վերտառությամբ՝ ԻԳ.00.02.- «Քաղաքական գործընթացներ և ինստիտուտներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել քաղաքագիտության դոկտոր, պրոֆեսոր Մարիամ Մարգարյանին:

5. Լսեցին՝ Ընթացիկ հարց: Կառավարման ամբիոնի ասպիրանտ Լիլիթ Գորիունի Աղամյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը

Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Վ.Խաչատրյան

Զեկուցողը նշեց, որ Կառավարման ամբիոնում 17.10.2018թ. կայացած ամբիոնի նիստում քննարկվել է ամբիոնի ասպիրանտ Լիլիթ Գորիունի Աղամյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը և ամբիոնի նիստում կայացրած որոշմամբ միջնորդում են գիտական խորհրդին Լիլիթ Գորիունի Աղամյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Մարքեթինգի զարգացումը երկարաժամկետ գործընկերային հարաբերություններում (ՀՀ առևտրային բանկերի օրինակով)» վերտառությամբ՝ Ը.00.02.- «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Դավիթ Ներսիկի Հախվերդյանին:

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Վ.Խաչատրյանը, Թ.Խեչոյանը:

Որոշեցին՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի Կառավարման ամբիոնի ասպիրանտ Լիլիթ Գորիունի Աղամյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Մարքեթինգի զարգացումը երկարաժամկետ գործընկերային հարաբերություններում (ՀՀ առևտրային բանկերի օրինակով)» վերտառությամբ՝ Ը.00.02.- «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Դավիթ Ներսիկի Հախվերդյանին:

6. Լսեցին՝ Ընթացիկ հարց: Կառավարման ամբիոնի ասպիրանտ Արսեն Գազիկի Զաքարյանի թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավարի փոփոխման հարցը:

Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Վ.Խաչատրյան

Զեկուցողը նշեց, որ հիմք ընդունելով այն հանգամանքը, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Հակոբի Բայադյանը մահացել է, Կառավարման ամբիոնում 17.10.2018թ. կայացած ամբիոնի նիստում քննարկվել է ամբիոնի Ը.00.02.- «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ ասպիրանտ Արսեն Գազիկի

Զաքարյանի գիտական ղեկավարի փոփոխման հարցը և ամբիոնի նիստում կայացրած որոշմամբ առաջակվում է Արսեն Գազիկի Զաքարյանի գիտական ղեկավար նշանակել տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Խաչատուրի Մարկոսյանին:

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Վ.Խաչատրյանը, Թ.Խեչոյանը:

Որոշեցին՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի Կառավարման ամբիոնի ասպիրանտ Արսեն Գազիկի Զաքարյանի գիտական ղեկավար նշանակել տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Խաչատուրի Մարկոսյանին:

7.Լսեցին՝ Ընթացիկ հարց: Մագիստրատուրայի հեռակա ուսուցման առաջին կուրսի (1822 թողարկում) 2018-2019 ուսումնական տարվա ուսուցման գործընթացի կազմակերպման ժամանակացույցի փոփոխման հարցը:

Զեկուցող՝ Ուսումնամեթոդական վարչության պետ Լ.Զիլֆուղարյան

Զեկուցողը ներկայացրեց, որ «ՀՀ պետական կառավարման ակադեմիայում ուսանողների գիտելիքների հսկման և գնահատման կարգ»-ում կատարվել են փոփոխություններ և 2018-2019 ուսումնական տարվա հեռակա ուսուցմամբ սովորողների համար նախատեսված չեն ընթացիկ ստուգումներ, ուստի առաջարկեց գիտական խորհրդին փոփոխել մագիստրատուրայի հեռակա ուսուցման առաջին կուրսի (1822 թողարկում) 2018-2019 ուսումնական տարվա ուսուցման գործընթացի կազմակերպման ժամանակացույցը (ժամանակացույցը կից ներկայացվում է):

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Վ.Խաչատրյանը, Գ.Չատինյանը:

Որոշեցին՝ Փոփոխել մագիստրատուրայի հեռակա ուսուցման առաջին կուրսի (1822 թողարկում) 2018-2019 ուսումնական տարվա ուսուցման գործընթացի կազմակերպման ժամանակացույցը:

Գիտական խորհրդի նիստի նախագահ՝

Ա.Լոքյան

Գիտական խորհրդի նիստի քարտուղար՝

Հ.Ստեփանյան
31 հոկտեմբերի 2018թ.

Կ.Տ.